

**Մարգարեի տեղակալ Կարեն Ադամյանը մասնակցեց ՀՀ մշակույթի նախարար
Հասմիկ Պողոսյանի մարզ կատարած այցելության ծրագրին 31.10.2014թ.**

Հոկտեմբերի 31-ին աշխատանքային այցով Տավուշի մարզում էր ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը: Այցի մեկնարկը տրվեց Նոյեմբերյանի տարածաշրջանում: Նախարար Հասմիկ Պողոսյանը Տավուշի մարգարեի տեղակալ Կարեն Ադամյանի ուղեկցությամբ եղավ Նոյեմբերյանի երաժշտական դպրոցում, որտեղ տեղի ունեցավ հանդիպում տարածաշրջանի գեղարվեստական կրթություն իրականացնող հաստատությունների ներկայացուցիչների հետ: Պատվիրակությունը եղավ նաև Վարազավանքում, Գոշավանքում և Դիլիջանի պետական երաժշտական դպրոցում: Այդտեղ կազմակերպվել էր մարզի շնորհալի երեխաների նկարչական աշխատանքների ցուցահանդես: